

Ա. ԱՆԴՐԵԱՏԵ

ՃԱՐ

ՀԱՅԿ (Փ) Կ XVIII  
ՀԱՅԱԳՈՒԲԱՐՈՒՄ

Պ Ա Տ Ս Հ Ի Ա Տ  
ՔԱՐԱՐՈՒՄ ԳՐԱՎԱՆԻ ԳՐԱՎԱՐՈՒՄ ՀԱՅԱԳՈՒԲԱՐՈՒՄ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

ԳՐՈՒՅԵՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑՄԱԳ

05 FEB 2018

Ա. ԱՆԴՐԵՅԵՎ

ՃԱՌ

ՀԱՄԿ (Բ) Կ XVIII  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1939 թ. մարտի 12-ին



Պ Ե Տ Հ Ր Ա Տ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

Ընկերներ, ամբողջ նախահամաշումարյան իրադրությունը—այն, թե կուսակցական կազմակերպություններում ինչպես եր անցնում համագումարի հարցերի քննարկումը և համագումարի պատգամավորների ընտրությունը—ցույց ետալիս, վոր ամբողջ կուսակցությունը դեպի եր XVIII համագումարն եր գնում իր աշխատանքում բարոյական խոր զոհունակության զգացմունքով, իր մեծագույն ուժի զիտակցումով և խոր յերախտագիտությամբ դեպի ընկեր Ստալինն այն քանի համար, վոր նա այս հաշվետու ժամանակաշրջանում ևս կուսակցությանը բոլոր զժվարությունների միջով տարավ դեպի նոր հաղթանակներ։ (Յերկարամ ծափահարություններ)։

Կուսակցության համագումարի կապակցությամբ յերկրում՝ Փարբիկաներում, զործարաններում, կոլտնտեսություններում տեղի ունեցող վերելքն ասում ե նաև, վոր բարոյական խոր զոհունակության այդ զգացմունքն ապրում ե վոչ միայն կուսակցությունը, այլև ամբողջ յերկիրը, մեր ամբողջ մեծ խորհրդային ժողովուրդը։

Յել ինչպես, ընկերներ, բարոյապես գոհացած չլինել կուսակցության աշխատանքի արդյունքներով, յերբ հաշվետու ժամանակաշրջանը մեր բոլցեկիյան կուսակցության կյանքում այնչափ հարուստ եր, հաղեցած մեծ աշխատանքով և նոր հաղթանակներով՝ մեր կուսակցության քաղաքական, տնտեսական ու կադմակերպական գործունեյության բոլոր բնագավառներում։

Վերցնենք միայն մի քանի հանրագումարներ, վորոնք ամփոփվեցին ընկեր Ստալինի կողմից։ Այն ժամանակ, յերբ կոսպիտալիդը շարունակում է զալարվել, դոփել տեղում, իմիճակը չե նույնիսկ հասնելու 1929 թվի արտազրության ժակարդակին, ԽՍՀՄ-ը նույն այդ ժամանակում գնացել ե շատ առաջ։



А. АНДРЕЕВ  
РЕЧЬ НА XVIII СЪЕЗДЕ ВКП(б)  
Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1939

Արտադրությունը 1929 թվի համեմատությամբ մեղա-  
նում աճել և համարյա 5 անգամ՝ կուսակցության ղեկա-  
վարությամբ այդ ժամանակում ժամկետից շուտ հատար-  
վեց յերկրորդ հնդամյակը։ Սոցիալիստական հանրակարգը  
հաղթեց և վերջնականապես ամրապնդվեց։ Ավարտված ե  
շահագործող դասակարգերի լիկվիդացիսն, վիթխարի քայլ  
և կատարված առաջ դեպի անդասակարգ հասարակու-  
թյունն այն բանով, վոր ասհմանադիմը բանվորների և  
դյուզացիների դասակարգերի միջև ավելի ու ավելի յե-  
շնչվում կոլեկտիվացման հաղթանակի և սոցիալիզմի աճ-  
ման հիման վրա։ Այս ժամանակում յերկրում կատարվել  
է, ինչպես ասաց ընկեր Ստալինը, մի ամրող կուլտուրա-  
կան հեղափոխություն։

Նույն այդ ժամանակաշրջանում մեր ժողովուրդը հնա-  
րավորություն ունեցավ ընդունելու մեծ Ստալինյան Սահ-  
մանադրությունը, իսկ բոլշևիկների կուսակցությունը՝  
կրկին ու կրկին անդամ ստանալու համաժողովրդական վրա-  
տահություն։

Հաշվետու ժամանակաշրջանում յերկրում լայնորեն  
ծավալվեց բառիս լայն խմասով համաժողովրդական  
ստախանովյան շրաժումը, վորն ընդդրկել և տնտեսության  
ու աշխատանքի բոլոր ճյուղերը, մի շարժում, վորն ար-  
տադրության և աշխատանքի արտադրողականության մեջ  
կատարել ու կատարում է լիակատար հեղափոխություն։

Ինչպես հասկա, ընկերներ, ըմինել գոհացած, յերբ կու-  
սակցությանը հաջողվեց ամրող ժողովրդի աշակցու-  
թյամբ և մասնակցությամբ ջախջախել, վոչնչացնել տրոց-  
կիստական-բուխարինական ու սոյլ դավադիրների, վնա-  
սարարների, մարդասալանների, լրտեսների կադրերը, վո-  
րոնյ ոտարերկրյա հետախուզությունների ղեկավարու-  
թյամբ նախապատրաստում ելին Խորհրդային իշխանության  
լիկվիդացիան և սորկության լծի վերականգնումը ԽՍՀՄ-ի  
ժողովուրդների համար։

Կարելի յե չտարակուսել, վոր այդ գիլերսանտական,  
ինտերվենտական կաղըերի ջախջախումը մեղանում՝ թի-  
կունքում, անպայման, խճճեց մեր արտաքին թշնամիների

բոլոր հաշմաները և նրանց համար դժվարացրեց Խորհր-  
դային Միության դեմ պատերազմի հնարավորությունը։  
Այն ժամանակ, յերբ կապիտալիզմը, իմձվելով ան-  
լուծելի հակասությունների մեջ՝ արդեն ներսողացել և  
յերկրորդ իմպերիալիստական պատերազմի մեջ, մեր բան-  
վորները և դյուզացիները կարող են վասահ լինել իրենց սո-  
ցիալիստական հայրենիքի վիճակի համար, վրայի հետեւ ան-  
ցած ժամանակաշրջանում կուսակցության ղեկավարությամբ  
յերկրի պաշտպանությունն ել ալելի յե ամրապնդվել, իսկ  
անհանդիս հարևաններից նրանք, ովքեր փորձեցին ձեռք  
բարձրացնել խորհրդային տերիտորիայի վրա, հիմնալորա-  
պես փշրեցին բրենց ատամները և իրենց մաշկի վրա զդա-  
ցին ԽՍՀՄ-ի պաշտպանության ուժը, մեր կարմիր բանա-  
կի ուժը։ (Ծափահարություններ)։

Զի կարող խոր գոհունակություն չառաջացնել նաև այն  
կազմակերպական աշխատանքը, վոր կուսակցությունը և  
նրա կենտրոնական կոմիտեն կատարել են հաշվետու ժամա-  
նակաշրջանում, վորի մասին խոսեց ընկեր Ստալինը։

Այդ ժամանակում պետական կառավարման, տնտեսու-  
թյան, հասարակական կյանքի մեջ ակտիվ մասնակցու-  
թյան են բարձրացված միլիոնավոր մարդկուկ՝ դորձարաննե-  
րեց, կոլտնտեսություններից և հիմնարկներեց։ Յերկիրը,  
պետությունը, կուտուրան և կառավարչությունը հարըս-  
տացան հարյուր-հազարավոր նոր մասնագետներով։

Այս հինգ տարում բուհերից և տեխնիկումներից բաց  
են թողնված 1.287.000 նոր մասնագետներ, չհաշված զին-  
վորական մասնագետները։ Հենց միայն անցյալ տարում  
բուհերից և տեխնիկումներից բաց են թողնված 294.700  
նոր մասնագետներ։

Կուսակցության ղեկավարությամբ հաշվետու ժամա-  
նակաշրջանում կազմակերպվել են 3.450 նոր ՄՏԿ-ներ,  
ավելի քան 660 ՄՏԱ-ներ, 939 նոր բուհեր ու տեխնի-  
կումներ։ Պրոֆմիությունների անդամների թիվն այդ ժա-  
մանակաշրջանում աճել է 4.700 հազար մարդով, կոմյերիտ-  
միության անդամներինը՝ մոտավորապես 3 միլիոնով։ Այդ  
ժամանակում պատրաստվել և վերապատրաստվել են ավելի  
քան 1.500 հազար նոր տրակտորիստական կոմբայնավար-

ներ: Վերապատրաստվել են կոլտնտեսությունների հարյուր-  
հաղարախոր նախադաշներ՝ ու կոլտնտեսային բրիգադիրներ:  
Ստեղծվել են 2·255 նոր սկզբնական կուսակցական կազմա-  
կերպություններ:

Հաշվի առնելով մեր կազմերի դաշտաբարական-քաղաք-  
քական դաստիարակության աշխատանքի թուլությունը,  
Կենտրոնական Կոմիտեն, ինչպես ձեզ հայսնի յե, այդ ուղ-  
ղությամբ կատարել ե շատ լուրջ աշխատանք, մանավանդ  
անձամբ, ընկեր Ստալինը, վորը, նայած իր ամենորյա-  
պրազմածությանը, մեր կուսակցությանն ապահովեց րոշե-  
գիկան կուսակցության իրական, պատության ստեղծու-  
մով, վորի շնորհիվ մեր կուսակցությունը, մեր կազմերը  
կարծ ժամանակաշրջանում դաշտաբազմության մի  
քանի աստիճանով ամելի բարձր: Իսկ Կենտրոնական Կոմի-  
տեյի վրոշումը պրոպագանդայի մասին, վորը մշակել է  
ընկեր Ստալինի անմիջական զեկավարությամբ ու անձնա-  
կան ժամանակությամբ, հանդիսանում ե ոլորակորի մարտա-  
կան մի ծրագիր, վորը նոր ձևով ե դնում մեր կողմերի  
քաղաքական դաստիարակության կազմակերպությը:

Նոր ձևով, ամենայն պարզությամբ Կենտրոնական Կո-  
միտեն դրեց ձևնարկություններում աշխատանքային կար-  
գապահության կարմանկերպման և վարչական դերի հարցե-  
րը, վոր ըերժ պաշտպանության հանդիպեց բանվորների ու  
տեխնիկական անձնակազմի մեջ՝ ֆաբրիկաներում ու գոր-  
ծարաններում և վարչական անվայրման արձեն տալիս և լուրջ  
արդյունքներ արտադրության մեջ դործի վիճակի և ար-  
տադրանքի թողարկման ասպարելում:

Կուսակցությունը և նրա Կենտրոնական Կոմիտեն ոյս  
ժամանակում բարձրից զրազմել են կոլտնտեսային և խորհ-  
անտեսային շինարարության կազմակերպական հարցերով:  
Երեսց կազմակերպական աշխատանքում կուսակցությունը և  
նրա Կենտրոնական Կոմիտեն հատուկ ուշադրություն նվի-  
րեցին ներկուսակցական կյանքին: Հենց վար սկսեցին զգաց-  
մել ներկուսակցական կյանքի թերությունները՝ դեմոկրա-  
տիկմի իրականացման դորում, ընկեր Ստալինը և Կենտրո-  
նական Կոմիտեն ամենայն սրությամբ դրին հարցը և ուղ-  
ղեցին այդ խոշորագույն թերությունները, իսկ կուսակցա-

կան կազմակերպություններն անսպայման արդեն լուրջ ար-  
դյունքների յեն հասել կուսակցական դեմոկրատիայի նոր-  
մանների, ընտրականության և հաշվետվականության վե-  
րականգնման դորձում:

Ուզգելով կազմակերպական աշխատանքում ներկուսակ-  
ցական դեմոկրատիայի այս թերությունները, կուսակցու-  
թյունն անցավ նույնպիսի, յեթե վոչ ավելի լուրջ, թերու-  
թյունների ուղղմանը՝ պրոֆմիություններուն և կոմյերիտ-  
ժիության մեջ: Այդ իմաստով՝ աշխատանքի արդյունքների  
ժաման, ակներեւուն, կասեն իրենք՝ պրոֆմիությունների և  
կոմյերիտմիության զեկավարները:

Կուսակցությունն այս ժամանակաշրջանում կարդի բե-  
րեց իր կուսակցական տնտեսությունը և կուսակցության  
անդամների հաշվառումը: Բավական ե ասել, վոր այժմ  
կենտրոնական Կոմիտեն ցանկացած ըստեյին կարող և պատ-  
կերացում ունենալ կուսակցության յուրաքանչյուր անդամի  
մասին: Ինձ թվում ե, վոր անմիջելի արդյունք ե հանդի-  
սանում այն, վոր կուսակցական կազմակերպությունների  
կոմիտեյից, կենտրոնական Կոմիտեյի զեկավարությամբ, կա-  
տարված վիթխարի կազմակերպական աշխատանքի հետե-  
մանքով ուժեղացել ե մեր կազմակերպությունների կազմ  
մասսաների հետ, իսկ ազգային կոմիտսակցությունների  
կենտրոններինը, մարզկոմներիննու յերկրկոմներինը՝ տե-  
ղերի հետ:

Բայց կուսակցության կազմակերպական աշխատանքի  
ամենազդիալոր և հիմնալի արդյունքը, անդաման, հանդի-  
սանում և բարձմաթիվ կազմերի դաստիարակումն ու առաջ-  
բացումը զեկավար աշխատանքի՝ կուսակցական, խորհրդա-  
յին, տնտեսական, պրոֆմիութենական ու կոմյերիտմիու-  
թյան կազմակերպություններում:

Այդպիսի նոր յերկտասարդ կազմեր, վորոնք բարձրաց-  
մել են ներքեխց առաջավոր, աճող մարզկանցից ու ստա-  
խանութականներից, այլև բարձրագույն ուսումնական հաս-  
տատություններին ավարտածներից—մեզանում կան հարյուր-  
հազարներով:

Եես կուսեյի հրամարակել մի քանի հիմնական տվյալ-  
ներ մեր կազմերի վորական կազմի փոփոխման մասին:

Ահա, որինակ, մարդկոմների, յերկրկոմների և աղջային կոմկուսակցությունների կենտկոմների քարտուղարների թվում մենք ունենք 28,6 տոկոս բարձրագույն կրթությամբ, իսկ լրիվ միջնակարգ ու թերի բարձրագույն կըթթությամբ—30 տոկոս:

Մարզկոմների, յերկրկոմների և աղջային կոմկուսակցությունների կենտկոմների քարտուղարների կազմի մեջ 54 տոկոսը վերջին տարիներում առաջ են քաշվել ստորին աշխատանքից և սկզբնական կազմակերպություններից, իսկ 39 մարդ քարտուղարական աշխատանքից յեն առաջ քաշվել ռւսուցումն ավարտելուց անմիջապես հետո:

Կուսակցության շրջկոմների, քաղկոմների և ոկրուգկոմների քարտուղարների մեջ բարձրագույն կրթությամբ կան 534 մարդ, թերի բարձրագույն և միջնակարգ կրթությամբ—2581 մարդ։ Ստորին աշխատանքից և սկզբնական կազմակերպությունների աշխատանքից առաջ են քաշված 7.250 մարդ և անմիջականորեն ռւսուցումից—185 մարդ։

Սկզբնական կուսակցական կոմիտեների քարտուղարների և կուսակազմակերպիչների կազմի մեջ կան բարձրագույն կրթությամբ 5.191 մարդ, միջնակարգ կրթությամբ—18.677 մարդ։

Այսպիսով, դուք այստեղից տեսնում եք, վոր մեր կուսակցական ղեկավար կադրերի կազմի մեջ զգալի տեղաշարժ է կատարվել դեպի կրթական ավելի բարձր մակարդակը, և սկզբնական կազմակերպությունների ստորին աշխատանքի անմիջական փորձը փոխադրվել է մեր կուսակցական ղեկավար որդանները։

Վոչ պակաս լուրջ վորակական փոփոխություններ կատարվել են նաև խորհրդային ու տնտեսական աշխատողների ղեկավար կադրերի կազմի մեջ։ Այսպես, որինակ, ԽՍՀ Միության և ՌԽՖՍՀ-ի ժողկոմների մեջ մենք ունենք 53 տոկոս բարձրագույն կրթությամբ, ժողկոմների տեղակալների մեջ—68 տոկոս, գլխավոր վարչությունների և ժողկոմատաների պետերի մեջ—60 տոկոս, ձեռնարկությունների գիրեկտորների մեջ—27,6 տոկոս բարձրագույն կրթությամբ։ Բավական զգալի թվով ստախանուվականներ այժմ մեզանում ղեկավար ալուստեր են դրամում

ժողկոմատաներում, գլխավոր վարչություններում, յերկաթուղիներում և վորպես արդյունաբերական ձեռնարկությունների ղերեկտորներ։

Կաղըրերի՝ քաղաքական ու գործնական տեսակետից մնանկացած մասի փոխարինումով և նոր մարդկանց ղեկավար աշխատանքի առաջ քաշելով մեր կոմսակցությունը մեծ դործ կատարեց, նա ուժեղացրեց իրեն։ Կատարվեց պետական և տնտեսական ապարատի առողջացում։ Մեր կուսակցական առւնն ավելի մաքրվեց ու ավելի թարմացավ։ Կապը մասսաների ու տեղերի հետ ղարձավ ավելի ամուր։ Նոր մարդիկ ներքեց բերին պրակտիկ աշխատանքի անմիջական փորձ։ Ստորագրությունը և բարոյական քայլայման պարբերն զգալի չափով անհետացան, վորովհետեւ դրանք անցյալում պաշտպանում եյին քաղաքական ներկածեյություն ունեցող մարդիկ, մի եյություն, վորը և վորոշում եր նրանց բարոյական անկումը։

Ընկեր Ստալինը հաշվետվության մեջ ասաց, վոր կապիտալիստական յերկրներում բուրժուական մամուլի էջերը խայտափայլում են կրկներգերով այն մասին, թե վերջին յերկու-յերեք տարում, կատարելով կաղըրերի մաքրում, բոլշևիկները թուլացրին իրենց թող իրենց միխթարեն այդ պարոնները։ Մենք ձեզ հետ միասին լավ գիտենք, վոր կուսակցությունը մեծ դործ կատարեց՝ առաջ քաշելով հարյուր-հաղարավոր նոր, թարմ, անարատ կաղըրեր։ Դրանով մենք բոլոր տեսակետներից ամրապնդեցինք զեկավարման դորձը կուսակցական, խորհրդային, տնտեսական ու պրոֆմիութենական կազմակերպություններում։ Գործը մեզանում այժմ անչափ ավելի ամուր և հուսալի։ Բայց, չնայած կուսակցության կողմից կիրավուած կազմակերպական վիթխարի աշխատանքին, մեր առջեւում, ընկերներ, գեռ կա վոչ քիչ աշխատանքուած դրա մասին խոսեց ընկեր Ստալինը։

## ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախ ճիշտ ե, վոր կուսակցությունը նոր կաղըրերի առաջքաշումով լուծեց կազմակերպական մեծ խնդիր։

Պրակտիկ աշխատանքի փորձը, կյանքի և կոնկրետ իրադրության զիտեցումը նոր կազմերի մոտ, անտարակույս, ավելի յէ, նրանք ավելի կուլտուրական են, շատերն ունեն բարձրագույն և միջնակարգ կրթություն, նրանք վարակված չեն զիտեկտիվային զեկավարման բյուրոկրատիկ փառված, սնապարծությամբ, վոժդիզմով, ավելի յեն կապված մասսաների հետ, ավելի ազնիվ են և ավելի յեն նվիրված իրենց կուսակցության վերաբերմամբ: Ստեղծված և հիանալի թանգարժեք Փոնդ: Խնդիրն այն է, վոր թանդ զնաւատենք այդ Փոնդը, նոր կազմերին ոգնենք բարձրանալու խնական զեկավարմանը մակարդակին: Դեկավար աշխատանքի լուրջ փորձ նրանք դեռ չունեն, նրանց պետք ե ողնել այդ գործում և բոլշեիկյան կոմիվածք ու քաղաքական դաստիարակություն ստանալու մեջ:

Յերկրորդ՝ ընկեր Ստալինը խոսեց կուսակցական զեկավարման մեջ կուսակցական-քաղաքական աշխատանքի և տնտեսության զեկավարման ճիշտ զուգակցումն ապահովելու անշրաժեցության մասին:

Մենք կարո՞ղ ենք արդյոք ասել, վոր մեր յերկրկոմները, մարդկոմները, չընկոմները պրակտիկայում արդեն լինեատար կերպով յուրացրել են այդ կազմակերպական խնդիրը: Վո՞չ, այդ ասել դեռ չի կարելի: Դժբախտաբար, նույնիսկ ամենավերջին ժամանակներս կենտրոնական կոմիտեն ստիպված յեղավ լրջորեն ուղղել մի քանի մարդկոմներին՝ զեկավարման միակողմանիության մեջ—կամ չեղվում են, տարվելով տնտեսական աշխատանքով, մոռանալով կուսակցական-քաղաքական խնդիրները, կամ, ընդհակառակը, յերեսի վրա յեն թողնում տնտեսական աշխատանքը, իսկ հետո նրանով զրաղվում են ճեղքվածքները լիկվիդացիայի յնթարկելու կարգով:

Կանոնագրության վերաբերյալ առաջարկները, վորոնք մտցված են Համագումարի քննարկմանը, նախատեսում են մի քանի արտադրական-ճյուղային բաժինների վերացումը: Բայց դա վոչ մի կերպ չի կարելի դիմել գորպես խորհըրդագոյին ու տնտեսական աշխատանքի զեկավարման խնդիրների նեղացում: Առաջարարակ դժվար ե և չի կարելի վորոշել, թե մեր կազմակերպություններում ուշադրության և

աշխատանքի ինչպիսի տռկոռ պետք ե հատկացվի կուսակցական-քաղաքական աշխատանքին և ինչպիսի տռկոռ՝ տընտեսական զեկավարմանը: Այստեղ պետք ե յենել այն բանից, ինչ ընկեր Ստալինն ասել և 1937 թվին Համկ(բ)կ կենակոմի պլենումում: Ընկեր Ստալինն ասել ե.

«Յեթե այժմ մեր վորոշ ընկերներ, ձեռնամուխ միելով կուսակցական-քաղաքական աշխատանքի ուժեղացմանը, մտքով անցկացնեն հեռանալ տնտեսությունից, ապա այդ կլինի մի ուրիշ ծայրահեղություն, վորը մեզ կնստի վոչ պակաս զոհողություններ: Զի կարելի մեկ ծայրահեղությունից նետվել գեղապի մյոււրը: Զի կարելի քաղաքականությունն անջանել անտեսությունից: Մենք չենք կարող հեռանալ տնտեսությունից նույնպես, ինչպես չենք կարող հեռանալ քաղաքականությունից: Ուսումնասիրության հարմարության համար մարդիկ սովորաբար մեթոդովիրեն անջատում են տնտեսության հարցերը քաղաքականության հարցերից: Բայց այդ կատարվում և միայն մեթոդովիրեն, արհետառականորեն, միայն ուսումնասիրության հարմարության համար: Կյանքում, ընդհակառակը, պրակտիկայում քաղաքականությունն ու տնտեսությունն անբաժանելի յեն: Նրանք գոյություն ունեն միատեղ և գործում են միատեղ: Յեվ նաև, ով մտածում և մեր պրակտիկ աշխատանքի մեջ տնտեսությունն անջատել քաղաքականությունից, տնտեսական աշխատանքն ուժեղացնել քաղաքական աշխատանքը նվազեցնելու գնով կամ, ընդհակառակը, քաղաքական աշխատանքն ուժեղացնել տնտեսական աշխատանքի նվազեցման գնով,—նուանպայման ընկնում ե փակուղու մեջ»:

Յերրորդ հարցը: Ընկեր Ստալինը վորպես կազմակերպական խնդիրներից մեկը մեր կուսակցական կազմակերպությունների առջև զնում եր խորհրդացյին ու տնտեսական աշխատանքի առանձին ճյուղերը մարդկանցով ամրապնդելու խնդիրը, վորպեսզի այդ կազմակերպությունները չփոխարինեն խորհրդացյան ու տնտեսական որդանները և իրենց

չվերածեն այդպիսիների: Ահա թե ընկեր Ստալինն այդ առ-  
թիվ ինչ և առել 1937 թվին Համբկ (ր)կ կենակոմի պլենումում:

«Բանաձեկ նախադժբ՝ կուսակցական կազմակեր-  
պությունները տնտեսական մանրունքներից ազատելու  
և կուսակցական-քաղաքական աշխատանքն ուժե-  
ղացնելու վերաբերյալ հայտնի կետի իմաստն այն չե,  
վոր հեռանանք տնտեսական աշխատանքից ու տնտե-  
սական գեկալարությունից, այլ սոսկ միայն այն,  
վոր այլևս թույլ չտանք տնտեսական որդանները,  
այդ թվում և հաստկապես հողային որդանները մեր  
կուսակցական կազմակերպություններով փոխարինե-  
լու և գիմարդկելու պրակտիկան: Հետեաբար, ան-  
հրաժեշտ և յուրացնել տնտեսական որդանների բար-  
չեկայան գեկալարման մեթոդը, վորի եյությունն  
այն ե, վոր սիստեմատիկաբար ողնենք այդ որդան-  
ներին, սիստեմատիկաբար ամրացնենք նրանց և տըն-  
տեսությունը գեկալարենք վոչ թե այդ որդաններից  
անկախ, այլ նրանց միջոցով»:

Կարելի՞ յե արդյոք, ընկերներ, ասել, վոր ընկեր Ստա-  
լինի այս լուրջ նախադպուչացումը մեր կազմակերպություն-  
ների կողմից արդեն լիակատար կերպով իրադորձված ե:  
Վո՛չ, այդ չի կարելի ասել, վորովհետեւ մեր մի քանի կազ-  
մակերպություններում մինչև այժմ ել կան աշխատանքի  
յերկու տիպ և աշխատողների յերկու տիպ: Մեկը նրանք  
են, վորոնք ձգտում են ամեն բան անել իրենք, ձեռնամուխ  
են լինում ամեն բանի, տնտեսական ու խորհրդային գեկա-  
լարման բոլոր մանրունքները քարչ են տալիս կուսկազմա-  
կերպություն, և դրա հետեանքով ի վիճակի չեն զլուխ բե-  
րելու գործը և հասցելու այն մինչեւ վերջ, դրանով իսկ  
դիմադրելով խորհրդային տնտեսական կազմակերպու-  
թյունները:

Աշխատանքի և աշխատողների մյուս տիպը—այդ՝ իր  
գեկալարությունն ընդհանուր-գիրեկտիվային գեկալար-  
ման հանդեցնելն ե, կոնկրետ ոպերատորի ամբողջ գեկա-  
լարությունը բոլորին ում ասեք վերահանձնարարելը: Յես  
կարող եյլ բերել վոչ քիչ թվով նման կոնկրետ որինակ-  
ներ առանձին մարդկամների աշխատանքից, բայց դա հաղի-

թե անհրաժեշտ է: Խնդիրն այն ե, վոր վերջականապես  
լիւլիւրացիայի յենթարկենք այլ թերությունները՝ խոր-  
հըրդային ու տնտեսական որդանները մարդկանցով ամբա-  
մինդելու և նրանց ճիշտ գեկալարման միջոցով:

Չորրորդ: Առաջվա նման ամենալուրջ խնդիրն ամեն մի  
աշխատանքի գեկալարման մեջ մնում և մարդկանց ընտ-  
րությունը և կատարման ստուգումը: Դռաք գիտեք, վոր  
այդ բանի վրա դեռ կենդանության որով լենինը լրջորեն  
պնդում եր՝ վրապիս ճիշտ գեկալարման հիմնական կազ-  
մակերպական պայմանի վրա: Այդ մնում և ամենաեյտկանը  
նաև մինչեւ այժմ: Այդ մասին մշտագես, հաստատակամո-  
րեն մեղ հիշեցնում և ընկեր Ստալինը:

Կարելի՞ յե արդյոք ասել, վոր կուսակցական, խոր-  
հըրդային ու տնտեսական գեկալարման այդ հիմնական  
կազմակերպական պայմանը դարձել և մեր գեկալարների  
միսն ու արյունը: Վո՛չ, Ընկերներ, այդ ասել չի կարելի:

Բանը հաճախ հանդում և այն բանին, վոր թխվում են  
մեկը մյուսին կրիսող գիրեկտիվներ, վորոնք մնում են  
տանց կատարման ստուգման: Հաճախ մարդկանց ընտրու-  
թյունը կազմակերպված և լինում այնքան անուշադիր, վոր  
գրան անպայմանորեն հաջորդում և կաղըերի հոսունու-  
թյունը, մարդկանց հաճախակի փոփոխումը, վորովհետեւ  
նրանք չեն առահովում իրենց գերը:

Նշանակում ե՝ խնդիրն այն ե, վոր վեկիւրացիայի յեն-  
թարկենք այդ թերությունները և խսկապես արմատացնենք  
մարդկանց ուշադիր ընտրությունն ու կատարման ստու-  
գումը, վորակես մեր ամբողջ առաջիկա աշխատանքի հիմնա-  
կան պայման:

Հինգերրորդ: Ճիշտ ե, վոր թշնամիների հիմնական կազ-  
մակերպական մարդկացման և ջախջախված են: Բայց դա մեղ չպետք  
և տրամադրի բարեհոգության, իսկ կատարման այժմ  
մեր վորոշ մարդկանց մեջ կարող են առաջ գալ այսպիսի  
տրամադրություններ,—թէ՝ ահա այժմ մենք թշնամիներին  
ջախջախված ենք, այժմ կարող ենք նորից հանդիսատ աշխա-  
տել: Այսպիսի տրամադրությունները վտանգավոր կլինե-  
յին, յեթե զրանք համակեյին մեր կազմակերպությունները:  
Ընկեր Ստալինը նախադպուշտում եր թշնամական կապի-

տալիստական շրջապատման մտուն, և այդ նախադպուշացումը մեր մարդիկ յերբեք չպետք է մոռանան: Դուքս Անդրեյ չմերկացված մնացորդները և նորից մեղ մոռ ուղարկվող թշնամիները հորինեն պայքարի նոր, ել ավելի նուրբ ճեմեր, առաջալվելով մեկ տեսակ մեթոդների մեջ՝ նրանք հորինելու յեն այլ մեթոդներ: Նրանք արդեն ողտագործում են զրպարաւության ճեղ՝ մեր նոր կազմերին վարկարեկելու համար:

Խնդիրն այն է, վոր այսուհետև ել մերկացնենք և խոփանենք թշնամիների բոլոր ու ամեն տեսակ փորձները, զրպակի նրանք չկարողանան վնասել, կաղըրեր հավաքագրել և կազմալուծում մտցնել մեր շարքերը:

Վեցերորդ: Անհրաժեշտ և ասել այն մասին, վոր կուսակցական կազմակերպությունների ղեկավարության և վերահսկողության ուշաբերությունից բաց չժողովի քաղաքական, տնտեսական ու խորհրդային աշխատանքի վաչ մի բնադրավառ: Դասերն ասում են, վոր այդ տեսակետից անցյալում մեր կազմակերպությունների կողմից թույլ են տըրքել շատ խոչոր թերություններ, և կենտրոնական կոմիտեն ստիպված յեղակ Աջորեն ուղղել մի քանի մարզկոմների ու յնրկրկումների:

Որինակ՝ չի կարելի ասել, վոր դրությունը բարեհաջող և յեղել այնպիսի՝ մի կարեռը ճյուղի ղեկավարման գործում, ինչպես պետական ու կոոպերատիվ առևտուրն և, վորը կապված և բնակչության անմիջական պահանջմունքների սպասարկման հետ: Կարելի՞ յի արդյոք պարծենալ թե մեր կուսակազմակերպությունները բավականաչափ լրջորեն ղեկավարում են այդ գործը և կուսակցական աշխատանքն այդ հիմնարկներում: Վո՞չ, դրանով պարծենալ չի կարելի:

Չի կարելի նաև բավարար ճանաչել կուսակցական աշխատանքի ղեկավարությունը մեր բուհերում և անհնիկումներում, վորտեղ պատրաստվում են հարյուր-հազարա վոր. բավարկույն յերիտասարդները, վորոնք վազը, ուսուցումը վերջացնելուց հետո, աշխատելու և ղեկավելու յեն քաղաքական, տնտեսական ու կուտարական աշխատանքի ամենատարբեր բնագավառներ: Իսկ չի վոր մեր

բուհերում և անհնիկումներում սովորում են 1.553.000 ժարդ: Ընկեր Ստալինի նախազգուշացումից հետո մեր կուսակցական/ կազմակերպություններն այդ տեսակետից դեռ լուրջ շրջադարձ չեն կատարել:

Ենք, վերջապես, զյուղատնտեսության մեջ կառարկող կուսակցական աշխատանքի մասին: Անտարակույց, հաշվետու ժամանակաշրջանում կուսակցական-քաղաքական աշխատանքը զյուղատնտեսության մեջ ուժիղացել է: Սկզբնական կազմակերպությունների քանակը և կուսակցության անդամների թիվը աճել է: Սակայն, այսուամենայնիվ, պետք են ընդունել զյուղատնտեսության մեջ կառարկող մեր կուսակցական աշխատանքի թուլությունը, նրա անհամապատասխանությունը գյուղում և առհասարակ գյուղատնտեսության մեջ մեր աշխատանքի վիթխարի խնդիրներին: Վերջնենք թեկուղ կոլտնտեսություններում սկզբնական կազմակերպությունների և կոմունիստների առկայության դորժի վիճակը:

Վերջին տարում մենք ունենք կոլտնտեսություններում կուսակցության անդամների թիվ վորաց աճում, սակայն գեռ չի կարելի նորմալ համարել, յերբ մեզ մոտ 243 հազար կոլտնտեսություններում կան միայն 12 հազար սկզբնական կուսակցական կազմակերպություններ՝ 153 հազար անդամով ու թեկնածուով:

Իսկ մի քանի մարզերում դրությունը առանձնապես վատ է:

Ահա, որինակ, Բելոռուսական Հանրապետությունը: 9.665 կոլտնտեսություններում կան միայն 44 սկզբնական կազմակերպություններ՝ կուսակցության 614 անդամով:

Վոլոգդայի մարզում՝ 5.970 կոլտնտեսություններում կան 31 սկզբնական կազմակերպություններ՝ կուսակցության 442 անդամով; Պերմի մարզում 3.314 կոլտնտեսության մեջ կան 16 սկզբնական կազմակերպություններ կուսակցության 274 անդամով:

Մինչույն ժամանակ կան հանրապետություններ ու մարզեր, վորտեղ դրությունն զգալիորեն ավելի լավ է: Այսպես, որինակ, Արբերջանում 3.677 կոլտնտեսություններն ունեն 882 սկզբնական կազմակերպություն՝ կուսակ-

ցության 14·500 անդամով։ Ղաղախտանում 7·347 կոլտընտեսություններն ունեն 1·239 սկզբնական կազմակերպություն՝ կուսակցության 15·600 անդամով։ Ստալինգրադի մարզում 1·655 կոլտնտեսություններն ունեն 507 սկզբնական կազմակերպություն՝ կուսակցության 5·286 անդամով։ Աչա՛, տեսնում եք, թե ինչպիսի տարբերություն դոյություն ունի առանձին մարզերի միջև։

Պետք են նաև ցանկանալ, վոր կոմյերիտմիության կազմակերպությունները լուրջ ուշադրություն դարձնեն դյուրում կոմյերիտմիության աշխատանքի ամրապնդման վրա։ Կոմյերիտմիությունը կիարողանար յեթե վոչ բոլոր կոլտընտեսություններում, ապա կոլտնտեսությունների դդալի մեծամասնությունում ունենալ իր սկզբնական կազմակերպությունները, մինչդեռ գրությունն այնպես ե, վոր 243 հազար կոլտնտեսություններից ավելի քան 100 հազար կոլտնտեսություններում չկան կոմյերիտմիության սկզբնական կազմակերպություններ։

Սրանից, իհարկե, ընկերներ, չի հետեւում, վոր մեր կազմակերպությունները պետք ե լայն կամպանիա սկսեն կոլտնտեսություններում սկզբնական կազմակերպությունների և կուսակցության անդամների թիվը մեխանիկորեն ավելացնելու ուղղությամբ, բայց համենայն դեպք այժմ մենք կոլտնտեսություններում ունենք շատ առաջավոր մարդիկ, վորոնք ցանկանում են լինել մեր կուսակցության անդամ, և մեր հետաղա աշխատանքում մենք ողարտավոր ենք հասնել կոլտնտեսություններում կոմունիտների թվի ու սկզբնական կազմակերպությունների քանակի ավելացման։ Այդ մեզ համար կհետացնի ինչպես կոլտնտեսություններում քաղաքական աշխատանք կատարելու խնդիրը, այնպես ել կոլտնտեսությունների դեկավարման կազմակերպումը։

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ,

Ընկեր Ստալինը մեծ և լուրջ խնդիրներ դրեց գյուղատնտեսության բնագավառում։

«Ե՛լ ավելի ծավալել մեր հողադործության և անառնապահության վերելքն այն հաշվով, վոր մո-

տակա 3—4 տարիների ընթացքում հասնենք տարեկան 8 միլիարդ փութ հացահատիկի արտադրության հեկտարից 12—13 ցենտներ միջին բերքատվությամբ, տեխնիկական կուլտուրաների գծով արտադրությունն ավելացնել միջին հաշվով 30—35 տոկոսով, վոչիսարների և խողերի գլխաքանակն ավելացնել կրկնակի, խոչը յեղջերավոր անասունների գլխաքանակը՝ մոտ 40 տոկոսով, ձիերի գլխաքանակը՝ մոտ 35 տոկոսով։»

Այս խնդիրներն իրազործելի յեն։ Յես կուղեյի կանգանանել այն հոկայական հնարավորությունների վրա, վոր մենք ունենք գյուղատնտեսության մեջ։

Զի կարելի թերազնահատել այն բանը, վոր ժողովրդի ամեն գույնի թշնամիներն, անվիճելիորեն, կոլտնտեսություններին և խորհանտեսություններին քիչ վնաս չեն հասցըրել գյուղատնտեսության առաջարեցում կատարած վնասարարությամբ։ Այժմ սպարզ ե, վոր ժողովրդի թշնամիներն ուտարերկրյա հետախուզությունների զեկավարությամբ մտահղացել ու անց եյին կացնում լայն պրովկացիայի պլան։ Բոլոր միջոցներն ոգտագործվում եյին կոլտնտեսույին գյուղում սով ստեղծելու համար, վորպեսզի յերկրում գրեգորհություն առաջ բերեն։ Դժվար ե, ընդհանրապես, վորներ արտահայտել այն կատաղությունը և զաղանային միջոցները, վոր թշնամիները գործադրում եյին իրենց նպատակին համար համար։ Թերեւս, մարդկային սրամությունը չգիտե այն նենդության ու վայրենության նմանը, վոր գործադրում եյին ժողովրդի թշնամիները։

Դիմակավորված վնասարարները կոլտնտեսային և խորհանտեսային անասուններին մասսայաբար վարակում եյին խնախտով (cαι), սիրիակախտով և այլ վարակիչ հիվանդություններով, իսկ անասունների միջոցով վարակում եյին նաև մարդկանց։ Բիոլարբություններում բուժական պրեպարատներ պատրաստելու փոխարեն՝ այնտեղ խցկված թշնամիները թույներ եյին պատրաստում անասուններին թունավորելու համար, արհեստականորեն կերաղրկություն եր ստեղծվում, վորպեսզի անասունների մասսայական կոտորած առաջ բերվի։

Կոլտնտեսությունները քայլայելու համար հողային որդանները խցկված թշնամինները փչացնում եյին ՄՏ կայանների և խորհանտեսությունների գյուղատնտեսական մեքենաները ։ Դաշտերի ծանծաղ վար եյին կատարում հացաբույսերը մոլտիստերով խեղղելու համար, ամեն կերպ խանդարում եյին բերքահավաքին և հացը փչացնում եյին չքաղած, իսկ հավաքած հացը փուեցնում պահեստներում ու վարակում ցորոնչիլով։ Դժվար է թվարկել այն ստոր միջոցները, վորոնցից ոգտվում եյին ժողովրդի թշնամինները։ Դյուղատնտեսությունը, ըստ յերեւութիւն, թշնամինների վնասարարության և դիվերսիոն աշխատանքի զվարվոր որդիկան եր։ Բայց թշնամինները սփառվեցին իրենց հաշիվներում։ Երանք հարկադրված յեղան ընդհարվել այն տառնակ-միլիոնավոր կոլտնտեսային գյուղացիության հետ, վորոնք չեն ուզում հին ձեռի ապրել։ Թշնամիններն ուզում եյին քայլայել կոլտնտեսությունները։ Այդ նրանց չհաջողվեց։ Նրանք դեմ առան ամբապնդված կոլտնտեսությունների սրատնեշին, ամբողջ ժողովրդի ատելությանը։ Նրանց, այդ վողորդելի մժղուկների ի՞նչ բանն է պայլարել ժողովուրդ-հակայի և նրա կուսակցության դեմ։ Յեվ ժողովուրդը թութափեց և ճգնեց այդ մժղուկներին, իսկ մեր կոլտնտեսությունները վնասարարների դեմ մդվող պայլարից դուրս քեկան ե՛լ ավելի ամրապնդված։

Վորոնք են այն հիմնական փոփոխությունները, վոր մեր կուսակցության ԽՎՊ Համագումարից հետո ընկած ժամանակաշրջանում տեղի յեն ունեցել գյուղատնտեսության և կոլտնտեսությունների մեջ։ Ընկեր Ստալինը խոսեց դրանց մասին։ Դյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումն ավարտված է։ ՄՏ կայանների թիվն այդ ժամանակաշրջանում աճեց ավելի քան յերկու անգամ։ Տրակտորային պարկի հզորությունն այդ նույն ժամանակաշրջանում ավարտված։ Կոմբայնների քանակին ավելացավ յերեք անգամ։ Կոմբայնների քանակական մասին վեց անգամ։ Կոլտնտեսությունների ամբողջ ցանքատարածության յերեք քառորդը մշակվում է ՄՏ կայանների տրակտորներով։ Կոլտնտեսային ցանքերի ավելի քան 300 հազար մարդուց, կոլտնտեսությունների հարյուր-հազարավոր մերժություններ, անասնաբույժներ, բուժակների թիվն՝ ավելի քան 300 հազար մարդուց, կոլտնտեսությունների հարյուր-հազարավոր մերժություններ, անասնապահներ կան։

անտեսություններում։ Յելերի տարածությունը 19 միլիոնից հասել ե՛թ 31 միլիոն հեկտարի, ցրտահերկինը՝ 24 միլիոնից մինչև 53 միլիոնի, սորտային սերմերի ցանքերը՝ 27 միլիոնից մինչև 67 միլիոնի, այսինքն՝ նրանք դարձել են գերակշռողներ։

Դրա հետ միասին զգալիորեն աճել են գյուղանատեսության արտադրանքը և արտադրողականությունը, մեր հողագործության բերքատվությունը և անամնապահության մթերատվությունը։ Արմատապես փոփովել և կոլտնտեսային գյուղացիության նյութական բարեկեցությունը։ Կոլտնտեսությունների գրամական յեկամուտները 1934 թվի համեմատությամբ ավելացել են յերեք անգամ։ Կոլտնտեսային առանձին անտեսությունների յեկամուտը, ըստ աշխորերի, ընամթերզով ավելացել է 2,5 անգամ, իսկ կոլտնտեսային առանձին անտեսությունների գրամական յեկամուտը ավելացել է 4 անգամ։ Կոլտնտեսականների կովաղրկությունն այժմ արդեն կարելի յել լիովին վերացված համարել։ Ունեցող կյանքը կոլտնտեսություններում զարձել և փաստ։ Այսպիսով այն, ինչ ընկեր Ստալինը Հայտարարեց հարվածային կոլտնտեսականների համամիութենական առաջին համագումարությունը կյանքի մասին, ամբողջությամբ և լիովին արդարացված է։

Հարկ չկա խոսելու այն վիթխարի փոփոխությունների մասին, վոր կոլտնտեսային գյուղում տեղի յեն ունեցել քաղաքական, կուլտուրական և սոցիալական տեսակետից։ Այդ բոլոր արմատական փոփոխությունները գյուղատնտեսության մեջ և կոլտնտեսություններում ուղեկցվել են գյուղատնտեսական միանդամայն նոր կոլտնտեսային ինտելիգենցիայի ստեղծումով, գյուղատնտեսական արտադրության նոր կաղըրերի ստեղծումով։

Միայն արակատրիստների և կոմբայնավարների թիվն անցնում է մեկ ու կես միլիոն մարդուց, գյուղատնտեսների, հողաչափների, զոտեխնիկների, անասնաբույժների, բուժակների թիվն՝ ավելի քան 300 հազար մարդուց, կոլտնտեսությունների հարյուր-հազարավոր մերժություններ, անասնապահներ կան։

Կոլտնտեսությունները գարձել են միակ ուժը և միակ

տերը գյուղում։ Կոլտնտեսային կարգն անհողղող է, նա մտել ե մեր գյուղացիության ամբողջ եյության մեջ։ Կյանքը կոլտնտեսությունից դուրս դարձել ե անիմաստ։ Մրանք են մեր կուսակցության աշխատանքի հանրագումարները գյուղատնտեսության մեջ։ Այսպիսով, ընկերներ, հակայական հնարավորություններ են ստեղծված գյուղատնտեսության բնակառակառում առաջ շարժվելու համար։

Հարկ չկա ապացուցելու, վոր մեր գյուղատնտեսությունը և հողագործությունը ամենախոշոր և ամենամեջնաշայացվածն են ամբողջ աշխարհում։ Յեզ, այնուամենայնիվ, նա մնում է վիթխարի չափով կախված քնության տարերգից—այդ մենք պետք ե ընդունենք։ Ամեն տարի ԽՍՀՄ-ի մերթ այս, մերթ այն մասում խորշակահարությունից (Ծառօթ), խոնավության և տեղումների պակասից կոլտնտեսությունները և խորհուտեսությունները հարցուրավոր միմոն փութ հացահատիկ ու կեր են կորցնում։ Այնպիսի յերաշտի գեղքում, վորն անցյալ տարի ընդգրկեց Պալուժյեն և մեր մի քանի կենտրոնական մարդերը, յերկրում, հին կարդի ժամանակական անհատական անտեսության ժամանակ, անդայման ռաբսափելի սովոր կլիներ, իսկ միլիոնավոր գյուղացիական անտեսություններ կավերվելին։ Կոլտնտեսային կարգի ժամանակ այդ բանը բացառված է։ Չնայած մեծ յերաշտին, հանրային տնտեսության և հողի մեջնայացված մշակման չնորհիվ կոլտնտեսությունները, ամբողջությամբ վերցրած, բավականաշափ բերք հավաքեցին, այնքան բերք, վորը բավական եր գեղքարին գրությունից գուրս գալու համար։ Մեր յերկիրն այնքան վիթխարի յե, և մեր հասարակակարգն այնպիսին ե, յերբմի հանրապետություն մեջ կամ մարդում յեղած անբերիտությունը կոնպենսացիայի յե յենթարկվում մյուս հանրապետությունների ու մարզերի բերքով ողոնությամբ։ Մեզնում սովոր բացառված է։ Անբերրիության ժամանակ մեր կուսակցությունը և կառավարությունը թույլ չեն տա, վոր անբերը սայունների կոլտնտեսականները սովահար լինեն։ Յերբ անցյալ տարի մարզերի վորոշ մասն անբերրիությունից տուժեց, կենտկոմը և ֆողկոմխորհն այդ մարզերի առավել տուժած կոլտնտեսություններին վարկերով և ղեղչերով 103 միլիոն փութ բնա-

մթերքով և ամելի քան 350 միլիոն ոուբլի գրամական ողոնություն ցույց տվին։

Բայց, ընկերներ, այսուհետև ևս հանդուրժելի՞ յե արդյոք այդպիսի կույզ կախվածությունը տարերքից մեր խոչը, մեքենացված գյուղատնտեսության մեջ։ Արդյոք ժամանակը չե՞ լրջորեն վերջ դնելու անձրևիկից յեղած այդ կույր կախմանը։

Մենք բոլոր հիմքերն ունենք մեր գյուղատնտեսությունը, մեր հողագործությունը կուլտուրական, գիտական ձեռվով վարելու համար և նրան տարերային կախվածությունից գուրս բերելու համար, վորովհետև ունենք համարյարուրով անհրաժեշտ միջոցները—լավագույն գյուղատնտեսական մեջնաներ, խոչը, և վոչ թե կորաված հողամասեր, հապարակական տնտեսություն և այդ տեսակետից ունեցած մեծ փորձ։ Չորային մարզերում բարգմաթիվ կոլտնտեսություններ և ՄՏ կայաններ արդեն գործնականում լուծել են այդ մեծ խնդիրը։

Յես կարող եյի միքանի կենդանի որինակներ վկայակոչել այն բանի, թե ինչպես համեմատարար ցածր բերքատվության գեղքում, վորն անցյալ տարի ստացվեց Սարատովի, Ստալինգրադի, Մոսկվայի և այլ մարզերում, բավականին շատ կոլտնտեսություններ, վորոնց գաշտերում նույնպես ամբողջ ամառը անձրև չեկալ, ինչպես այդ մարզերի մյուս կոլտնտեսությունների գաշտերում, — սուցան նորմալ և նույնիսկ բարձր բերք նրանով, վոր չենթարկվեցին տարերքին, կոիվ հայտարարեցին նրան, խիլ իրենց գաշտերում հողագործությունը կատարեցին կուլտուրական ձևով։

Ահա, որինակի համար, մի քանի կոլտնտեսություններ։ Սարատովի մարզում, յերբ 1938 թվին հեկտարի միջին բերքատվությունը 22 փութ եր, բարակովովունի շրջանի «Կրասնի Ռուտյար» կոլտնտեսությունը աշնանացան ցորենի հեկտարից 75 փութ բերք ստացավ, գարնանացան ցորենի հեկտարից 60 փութ, վարսակի հեկտարից 76 փութ, զարու հեկտարից 72 փութ։ ՈՇՊՈՒ-ի անվան կոլտնտեսությունը ցորենի բերք ստացավ հեկտարից 70 փութ, «Կրասնի թթու

բեց» կոլտնտեսությունը 117 հեկտար հողամասի ամեն մի հեկտարից ստացավ 100 փութ զարի:

Ահա Ստալինդրադի մարդը, վորտեղ հեկտարից միջինը 19 փութ բերքատվության ժամանակ Նեխտայի գովածի Կրուպիկայայի անվան կոլտնտեսությունն աշնանացան ցորենի յուրաքանչյուր հեկտարից ստացավ 72 փութ, իսկ սերմադաշտերից՝ 95 փութ. Ն. Անենսկի շրջանի կազմանովիչի անվան կոլտնտեսությունն աշնանացան ցորենի հեկտարից հավաքեց 86 փութ:

Մուկվայի մարզում 1938 թվին հեկտարից 33 փութ միշտն բերքատվության ժամանակ Դիմիտրովի շրջանի «Պորեգա» կոլտնտեսությունը միջին հաշվով հեկտարից 106 փութ հացահատիկ ստացավ, իսկ հաճարից՝ հեկտարից 136 փութ։ Ստալինյան Սահմանադրության անվան կոլտնտեսությունը հեկտարից ստացավ 109 փութ, Ստալինի անվան կոլտնտեսությունը՝ 173 փութ վարսակ, «Ռյեղիննյե» կոլտնտեսությունը՝ 154 փութ զարի:

Յես, ընկերներ, այս որինակները բերի այդ մարդերի միայն 2—3 կոլտնտեսություններից։ Բայց անցյալ տարի յերաշտից տուժած մարդերում այդպիսի կոլտնտեսություններ գույք թե ծիսակորներով, այլ տասնյակներով ու հարյուրներով են հաշվվում։ Իսկ ի՞նչ միջոցներով այդ կոլտնտեսությունները հաղթահարեցին յերաշտը։ Ահա թե ի՞նչ ե կատարել Սարտովի մարդի Բալտկոմիսկու շրջանի ՈՒՊՈՒ-ի անվան կոլտնտեսությունը։ Նա ցանքը հավաքելուց հետո միստրուսմ կատարեց, ամբողջ ցրտահերկը մինչև սեպտեմբերի 30-ը հերկեց 18—20 առնտիմետր խորությամբ, ձնակալում կատարեց։ Ցանքը ավարտվեց վաղ և սկզբ ժամկետներում։ ցանքից առաջ սերմացուն դոմիկը, ախտահանվեց և լիովին յարովիզացիայի յենթարկվեց։ Թվում եր, թե բարդ արդրտեխնիկա չէ, իսկ կոլտնտեսությունը հաղթահարեց յերաշտը։ Մոտավորապես նորյանը կատարվել ե և մյուս կոլտնաենություններում։ Այս ամբողջ վորձը դրի յի պանմել կենտրոնական կոմիտեյի և Միության ֆողկոմիուրծի կողմից՝ վարդես վրոշում։ Հարավ-Արևելքում յերաշտի դեմ պայքարելու համար։ Բայց թվում և թե այդ վորոշումը զեւսս անքան ել բավականաչափ լրջությամբ չէ

կիրառվում մեր Հողմողկոմատի և այդ մարդերի մեր մարդկամների կնոջից։

Ընկեր Ստալինը խնդիր ե դրել մոտակա տարիներում ստանալ 8 միլիարդ փութ համախառն բերք, այսինքն՝ հեկտարից 13 ցենտներ։ Այդ թիվը ունել ե, սակայն դրա համար հարկավոր ե, վորպեսզի մեր կաղմակերպություններն աշխատեն լրջորեն և ամենից առաջ վերացնեն այն կորուստները, վոր բազմաթիվ ՄՏ կայաններ և կղանտեսություններ ունենում են ցանքն առնվազն, վորպես կանոն, ժամկետից յերկու յերեք որ ուշացնելու կապակցությամբ, ի հավելում դրա, ցանքը գարնան սեղմված 5—6 որով։ Աշնանացանի ժամանակ, վորպես կանոն, մեր ՄՏ կայաններն ընդհանրապես ճշգրիտ ժամկետների չեն հետևում վոչ ցանքն սկսելու, վոչ ել այն ավարտելու համար, իսկ լինում կ այնպես, վոր ցանում են մինչև սառնամանիքն սկսվելը։ Իսկ ի՞նչ ե նշանակում ցանքում ուշանալ 2—3 որով կամ յերկարագույն այն։ Այդ նշանակում ե կորյնել բերքի  $\frac{1}{4}$ -ից մինչև  $\frac{1}{2}$ -ը։

Շատ ՄՏ կայաններ և կոլտնտեսություններ բերքահավաքը վատ նախապատրաստելու և այն մի ամբողջ ամիս, յերբեմն ել ամենի յերկարագելու պատճառով կորցնում են բերքի մի մասը։ Միայն վերացնելով այդ յերկու թիրությունները, մենք արդեն կարող ենք ստանալ և սրահանել առնվազն մի քանի հարյուր միլիոն փութ լրացուցիչ հացահատիկ ու կերա Այդ նպատակն ել չենց ուղղված են կուսակցության կենտրոնական կոմիտեյի վորոշումները։

Թե վորքան վիթխարի յեն հացահատիկների և տեխնիկական կուտուրաների բերքատվության բարձրացման հնարակությունները, այդ ցույց են տալիս հաղարավոր կոլտնտեսություններ, տասնյակ-հազարամյուր բրիգադներ և ողակներ։ Յեթե վերցնենք բերքատվության հաշվառումը 1938 թվին, 187 հազար կոլտնտեսությունների գծով, ապա կատացվի, վոր արդեն 58 հազար կոլտնտեսություններ հեկտարից ստացել են 66 փութ և ավելի բերք, իսկ այդ թվում 35 հազար կոլտնտեսություններ ստացել են 78 փութ և ավելի բերք, այսինքն՝ 13 ցենտներ և ավելի, յերր ԽՍՀ Միությունում հացահատիկների միջին բերքն եր 9,3 ցենտ-

ներ, այսինքն՝ հեկտարից 56 փութ։ Իսկ առանձին չըջանաներ, ամբողջությամբ վերցրած, հասել են այսպիսի բերքի։ Ամսիի մարզի Խուսկո-Պոլյանսկի և Շերբակուլսկի շրջաններում՝ հեկտարից 123 փութ, Զելյարինսկի մարզի Լոպատինսկի շրջանում՝ հեկտարից 125 փութ, Վինիցիայի մարզի Յամպոլիի շրջանում՝ հեկտարից 129 փութ, Հյուսիսային Կաղախատանի մարզի Քելլերովսկի և Պետրովսկի շրջաններում՝ հեկտարից 140-ական փութ։ Կոլտնտեսություններում ամենաբարձր բերքը յեղել է հեկտարից 158 փութ, ինչպես, որինակ, Սվերդլովի մարզի Լիտվինովի անվան կոլտնտեսությունում։

Բայց բրիգադների, ամբողջությամբ վերցրած, ել ավելի մեծ բերք ե ստացվել։ Որինակ, Կույրիչեվի մարզի Մելեկեսի շրջանի Քաղբաժնի անվան կոլտնտեսության ընկեր Սոլդատովի բրիգադը հացահատիկի միջին բերք ե ստացել հեկտարից 225 փութ, Ազգեցի աշտոնում մարզի Կրասինի անվան կոլտնտեսության ընկեր Լեպովսկու բրիգադը՝ հեկտարից ստացել է 246 փութ։

Կոլտնտեսականներն ել ավելի մեծ բերք են ստացել առանձին ողակներում։ Ալտայի յերկրամասի Քաղբաժնի անվան կոլտնտեսության կոլտնտեսության ընկ. Սերգեյիվայի ողակն իր 4 հեկտար հողամասից ստացել է յուրաքանչյուր հեկտարից 438 փութ ցորեն, իսկ 10 հեկտար հողամասի յուրաքանչյուր հեկտարից՝ 328 փութ. «Կրասինի պարտիզան» կոլտնտեսության ընկ. Պատեհնկոյի ողակը գարնանցան ցորենի մի հեկտարից ստացել է 457 փութ բերք, իսկ 15 հեկտարից 353-ական փութ բերք։ Բելովազովսկի շրջանի «Եռովի Չարիչ» կոլտնտեսության ընկ. Ոսկիտինի ողակը 1937 թվին հեկտարից 481 փութ ցորենի բերք ե ստացել։ Ալտայի յերկրամասի անվանի առաջավոր կոլտնտեսականներ ընկերներ Յեֆրեմովի և Զումանովի ողակները 1936 թվին հեկտարից 213-ից մինչև 372 փութ բերք են ստացել։ Դա միանդամայն անսպասելի բան եր տեղական դյուլատանեսների համար։ Հաջորդ տարին Բելովազովսկի շրջանի այդ և բարձաթիվ այլ ողակներ աննախանի առաջավոր կոլտնտեսականներ ընկերներ Յեֆրեմովի և Զումանովի ողակների շրջանի այդաթիվ աղակը հեկտարից 427—457 փութ։ Բնկեր Չումանովը 1938 թվին հեկտարից ստացալ 512 փութ բերք։ Բարձր

բերքի այդպիսի ողակները 1938 թվին միայն Ալտայի յերկրամասում հաշվում եր 4300։ Ի դեպ ասած, այդ չարժման հոգին ու նախաձեռնողը յեղել է Ալտայի յերկրամասի Բելովազովսկի շրջկոմը, նրա առաջին քարտուղարը։ Այդ ցույց ե տալիս, թե ինչ կարող են անել մեր շրջկոմներն ամեն մի շրջանում, յեթե ցանկանան և կացողանան։

Այսպես և հացահատիկի վիճակը։

Աչա թե ինչ ե կատարվում բամբակի գծով։ ԽՍՀՄ-ում 1938 թվին հեկտարից 12,9 ցենտներ միջին բերք յեղած ժամանակ՝ առանձին շրջաններում, ամբողջությամբ վերցրած, ստացվել են այսպիսի բերքեր. Թուրքմենական ԽՍՀ-ի Գյոքթէկի և Ֆարարի շրջաններում՝ հեկտարից 23,8 ցենտներ. Տաջիկական ԽՍՀ-ի Ստալինաբադի շրջանում՝ հեկտարից 27,8 ցենտներ բամբակ. Ֆերգանայի մարզի Իզրասոբենդի շրջանում՝ հեկտարից 33 ցենտներ։ Բայց կոլտնտեսությունների, ամբողջությամբ վերցրած, արդեն բամբակի ավելի նշանակալից բերք ե ստացվել։ Թուրքմենական ԽՍՀ-ի Կարլ Մարքսի անվան կոլտնտեսությունը՝ հեկտարից 43 ցենտներ։ Բայց կոլտնտեսությունը՝ հեկտարից 43 ցենտներ։ Բայց բրիգադների, ամբողջությամբ վերցրած, բամբակի ամենաբարձր բերք արգեն ստացվել է հեկտարից 91 ցենտներ՝ Ալղեկական ԽՍՀ-ի Ֆերգանի անվան կոլտնտեսության ընկ. Կուրրամանովի բրիգադում։ Բայց բամբակի ավելի բարձր բերք են ցույց տալիս ողակները։ Որինակ, Կիրդիկական ԽՍՀ-ի Վորոշիլովի անվան կոլտնտեսությունը՝ հեկտարից 125 ցենտներ։ Ալմասպարի մովի ողակը հեկտարից հավաքել է 108 ցենտներ. Ալղեկական ԽՍՀ-ի Սվերդլովի շրջանի անվան կոլտնտեսության ընկ. Ա. Ալմասպարի նոր կամաց հեկտարից հավաքել է 130 ցենտներ. Ազրեջանական ԽՍՀ-ի Լիտվինովի անվան կոլտնտեսության ընկ. Ալյախայի ողակը՝ հեկտարից 151 ցենտներ։

Ազրեջանական ԽՍՀ Վորոշիլովի անվան կոլտնտեսության ընկ. Գոջար Մուստաֆա կղի ողակը հեկտարից

ստացել և 151 ցենտներ։ Այսպես և մեզանում բամբակի դործի վիճակը։

Ահա թե ինչ և կատարվում վուշի գծով։ ԽՍՀՄ-ում, 1938 թվին հեկտարից ստացված 2,7 ցենտներ միջին բերքի գիմաց, կան առանձին շրջաններ, վորոնք արդեն յերկու անդամ ավելի բերք են ստացել։ Արինակ, Կալինինի մարզի Կրասնոբորժի շրջանը հեկտարից ստացել և 4,6 ցենտներ, Կալինինի մարզի Կամենսկի շրջանը—հեկտարից—5,3 ցենտներ։

Բայց առանձին որպեսների կիրովի մարզի Կաղանովից անվան կոլտնտեսության վողքայիշայի ողակը հեկտարից ստացել և 12,8 ցենտներ վուշ-մանրաթել։ Բելոռուսական ԽՍՀ Զառուի շրջանի «Յունի Կոմունար» կոլտնտեսության ընկ։ Կանոնարեայի ողակը հեկտարից ստացել և 14 ցենտներ։ Բելոռուսական ԽՍՀ-ի Մատիսլավլիսկի շրջանի «Մայիսի 1» կոլտնտեսության ընկ։ Ֆելիկինայի ողակը հեկտարից ստացել և 17,6 ցենտներ։ Ժիտոմիրսկի մարզի եմիլչինսկի շրջանի անվան կոլտնտեսության ընկ։ Բարանովսկայայի ողակը 1936 թվին հեկտարից ստացել և 14 ցենտներ, 1937 թվին՝ 20,6 ցենտներ, իսկ 1938 թվին՝ 21,75 ցենտներ։

Կույնը ճականդեղի գծով։ ԽՍՀՄ-ում 1938 թվին հեկտարից 141 ցենտներ միջին բերքի պարագայում առանձին շրջաններ ամրողությամբ վերցրած շատ ալելի բարձր բերք են ստանում։ Այսպես, որինակ, Դնեպրոպետրովսկի մարզի Շիրոկովսկի շրջանը հետօնարից ստացել և 335 ցենտներ, Կիրգիզական ԽՍՀ-ի Կանտու շրջանը հեկտարից ստացել և 361 ցենտներ։ Կիրգիզական ԽՍՀ-ի Կալինինի շրջանի «Կենտկոմի գծի համար» կոլտնտեսությունը—հեկտարից 442 ցենտներ։ Բայց առանձին բրիգադիների, որինակ, Պոլտավյայի մարզի ճականդեղացան խորհունակության ընկ։ Դեռա Զգուրովսկու բրիգադին հեկտարից ստացել և 455 ցենտներ ճականդեղ, իսկ 1938 թվին—545 ցենտներ։ Կիրգիզական ԽՍՀ-ի Կանտու շրջանի «Սոցիալեյ» կոլտնտեսության ընկ։ Մամունովի բրիգադը հեկտարից միջինն ստացել և 534 ցենտներ ճականդեղ։ Բայց ողակների ստացվել և հեկտարից համար ցենտներից ալելի բերք։ Վինիյայի մարզի

«Զերվոնի Պերեղովիկ» կոլտնտեսության ընկ։ Ա. Դ. Ախուտայի ողակը 1936 թվին ստացավ 835 ցենտներ բերք, իսկ 1938 թվին՝ արդեն 1.062 ցենտներ։ Խարկովի մարզի Լոզովուսկու շրջանի «Զերվոնա Ռելիախնա» կոլտնտեսության ընկ։ Գիլիպենկոյի ողակը 1936 թվին հեկտարից ստացավ 700 ցենտներ ճականդեղի բերք, իսկ 1938 թվին՝ 1.049 ցենտներ։ Կիրովոդրադի մարզի Միկոյանի անվան խորհունակության ընկ։ Պրովոլոցկայայի ողակը 1938 թվին՝ հեկտարից ստացավ 1.103 ցենտներ։

